

ԱԶԱՏ ԽՕՍԻՔ

ԶՈՐԵ՛ ՇԱԲԹԻ Զ9 ՕԳՈՍ. 1906. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ
ԴԱՏԱՍՏԱՆԸ

Արտաստժոր ատեանին առջև

Բ. ՆԻՍ

Օգոստոս 19, կիրակի առտու, տեղի ունեցաւ
սոյն շահեկան դատին երկրորդ նիստը, ի ներկայու-
թեան երկեսու հետաքրքիրներու խուման բազմու-
թեան մը:

Ստեանը բայուելուն նախագանը հետեւալ յայ-
տարարութիւնը ըրաւ.

- Ամբաստանեալի փաստարանին խօսք տալէ ա-
ռաջ հարկ կը համարիմ յայտարարել թէ պարոն Ան-
կեղծութիւն, պարոն Ուզղամտութիւն և պարոն Կա-
շառակերութիւն, որոնք կոչնագրով հրաւիրուած էին
դատարան, վկայութիւն տալու համար, մեր հրաւե-
րին պատասխանած են զրաւօր կերպով:

Պարոնայք Անկեղծութիւն և Ուզղամտութիւն հե-
տեւեալ նամակը ուղղած են ատեանիս.

«Տէր նախագահ,

Մեծ զարմանքով կարդացինք պատկառելի դա-
տարանիդ կողմէ մեզի ուղղուած կոչնագիր մը որով

կը հրաւիրէք մեզ իբրև վկայ ներկայանալ Քաւառա-
յին Երեսփոխանական Ժողովի դատաստանին առթիւ:
Ձեր մեծապատուութիւնը պէտք էր քաջ պիտանար որ
մենք սկիզբէն ի վեր երբէք ո ե է մասնակցութիւն
չենք ունեցած «Ալեքսանդրիոյ Սահմանադրական
պայքար» անունին տակ տարիներէ ի վեր քաղաքին
մէջ տեղի ունեցած շարժումներուն: Ուստի մեծապա-
տիւ տէր, ոչ թէ միայն պէտք չենք զգար դատարա-
նիդ ներկայանալու ուր ո ե է վկայութիւն չունինք
տալու, այլ նոյնիսկ կը բողոքենք այդ խնդրին մէջ
մեզ եւ մասնակից ընելու համար ձեր կողմէ ցոյց
տրուած ճիգերուն դէմ:»

Նախագահ.- Ահաւասիկ պ. Անկեղծութեան և պ.
Ուղղամտութեան նամակը, իսկ գալով պ. Կաշառա-
կերութեան, կ'երեւայ որ վերջերս մեկնած է Պարս-
կաստան՝ ինչպէս կը հաստատէ հետեւեայ հեռագիրը,
լոր երկու ժամ առաջ ստացայ.

«Նախագահ

Արտասովոր ատեննի,

Ստացայ կոչնագիր. կարող չեմ ներկայանալ,
օրթ. Կ. Փաշայեան խանի հետ պայմանագրուած ըլ-
լով քսան տարուան համար:»

Նախագահ (խօսքը ամբաստանեալի փաստաբա-
ն ուղղելով).- Մէքը Աչկապուկ, Ղիտողութիւն մը
նիք այս մասին:

Մէքը Աչկապուկ.- Ո՛չ, ինչպէս նամակով յայտ-
ծ են արդէն, մենք երբէք գործ կամ յարաբերու-
ւն չենք ունեցած պ. Անկեղծութեան և պ. Ուղ-
մտութեան հետ, գալով պ. Կաշառակերութեան,
դատին պաշտպանութեանը համար պէտք ունե-
իր վկայութեան, բայց քանի որ բացակայ է և

Կայմանագրուած է քսան տարուան համար անբաժան մնալու յարգելի տօրթ. Կ. Փաշայիտն խոնի հետ, կ'առաջարկեմ որ զրաւոր կերպով զրկէ իր վկայութիւնը:

Նախագահ.- Եստ լաւ, Մէզը Աշկապուկի, ձեր առաջարկը պիտի գործադրուի:

Ժողովուրդ.- Կ'ազաչեմ, տէր նախագահ, շատ քեզքս չհամար կոր սա անշամ դարձածներուն, տարիներէ ի վեր պ. Անկեղծութեան և պ. Ուզումաութեան անունները կը լսէինք, ամէն կողմէ, տեղ սկան ազդային խնդիրներուն մէջ, իսկ հիմակ կէր կ'ըսէք որ անոնք բնաւ մասնակցութիւն չեն տւեցած այդ խնդիրներուն... իրաւ որ, խեղքս բնաւ չհամար կոր նախագահ.- Լսեցէք, կը խնդրեմ, խօսելու իրաւունք չունիք:

Ժողովուրդ.- Վնյ, անանկ մի եղաւ հիմա:

Ընդհանուր Դատախազ (Խօսքը Ժողովուրդին ուղղելով).- Դուն լո՛ւ, մենք արդէն քու դատդ կը պաշտպանենք կոր:

Ժողովուրդ.- Ողջ ըլլաք... ո՛վ իմ դատս չպաշտպաներ արդէն:

Նախագահ.- Վերջացուցէք այդ վիճաբանութիւնը որ կրնայ շատ հետունները տանիլ մեզի. Մէզը Աշկապուկի խօսքը ձերն է:

(Մէզը Աշկապուկի, թիւին տակ անյուշելի պարութայ մը, կը յառաջանայ գէտի ատեան, պարութան կը բանայ և առջիւր գտնուած սեղանին վրայ կը սըրփոէ ամբողջ Փիւնիկի, Արշալոյսի, Ազատ Խօսքի, Ազատ-Բեմի, Սրէնքի հաւաքածոները. քանի մը հարիւր հատ թոռցիկ թերթեր, յաւելուածներ, կոչեր ևն ինչպէս նաև շատ մը միթիւնի հրաւերներ: որչմա-

Կը շնորհաւորինք Ազատ Բեմը իր բերանը
ըփտ կարելուոյն մաքրած ըլլալուն համար և կը
մաղթենք որ յարատեւէ այդ մաքրագործումի
ճամբուն մէջ:

ԵԶՆԻԿ ՍՐԲԱԶԱՆ

Գեր. Եգնիկ Եպիսկոպոս Ապահունի որ, ինչ-
պէս յայտնի է, Վեհ. Կաթողիկոսին հրաւերովը
Էջմիածին պիտի երթար, քանի մը որ առաջ Ա-
լեքսանդրիա գալով առաջնորդարան իջևանեցաւ
եւ երէկ առտու, ռուսական հիւպատոսարանէն
իր անցագիրը վաւերացնելէ յետոյ. մեկնեցաւ
գէպի Պաթում ուրկէ պիտի երթայ Էջմիածին:
Կը լսենք թէ Գահիրէի Գաւառական ժողովը
քսան ոսկի իբրև ճանապարհածախս տրամագրած
է Տ. Եգնիկ սրբազանին:

ՊՕՂՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Ալեքսանդրիացի հայ ծնողքները, գրեթէ
հարիւր յիսունի չափ, գրաւոր բողոք մը պատ-
րաստած են Պօղոսեան վարժարանի ուսուցչական
մարմնոյն և մասնաւորաբար տնօրէն՝ պ. Սմբատ
Բիւրատի գէմ, խնդրելով որ ձեռնհաս իշխանու-
թիւնը միանգամ ընդ միշտ վարժարանը մաքրէ
զայն ապականող տարրերէն և հարկ եղած բա-

բեկարգութիւնները մացնէ հոն:

Մնօզքները չգոհանալով այդ բողոքագրով, երէկ, ուրբաթ գիշեր, գումարում ժը ըրած են Տիգրան Երկաթ ժող. Միութեան սրահին մէջ և Քօթը հսգիէ բողկացած մասնախումբ մը ընտրած են որպէսզի Պօզոսեան վարժարանի մարդասրժման կենսական խնդրով զբաղի և հարկ եղած դիմումները ընէ ուր որ անկ է:

Կը յուսանք որ այս յանձնախումբը, որ կազմուած է անաչառ, կարող և բոլորովին ո՛չ կուսակցական և ուղղամիտ անձերէ պիտի յաջողի վերջապէս հականեխել Պօզոսեան վարժարանը զայն ապականող թունաւոր միքրսպներէն:

ԹԵՐԹԻԿԸ ԿԸ ԴԱԴՐԻ, ԹԵՐԹԻԿԸ ԴԱԴՐԵՑԱԽ

Եւ թերթիկ ապրեցաւ, որչափ
կ'ապրին վարդի թերթիկներ՝ ա-
միս մը միայն:

Գր. Սարաֆեան

Լրաբերի պատուարժան խմբագրին այս դամբանական տողերը ուղղուած վաղա՛ճեռիկ առաւօտեան օրաթերթին հասցէին, կ'արձանագրենք հոս իբրև հուսկ բանք թերթիկի դադարին վրայ:

Թերթիկ, ինչպէս յայտնի է, կարճ բայց փառաւոր կեանք մը ունեցաւ: Արտասահմանի առաջին հայ օրաթերթը եղաւ որ առտուն կանուխ ընթերցողին կը պարզէր միայն աշխարհի քաղա-

Տ. Պետրոս Մամուկեան	40
Տ. Սիմոն և Յակոբ Բաթաբոսեան	40
Արժ. Գանիէլ վրդ.ի միջոցաւ պնակի հասոյթ	68
Զանազան ազգայինք	75
Տ. Պարոյր Մանուէլեան	97 50
Տօբթ. Մարգար Միսաբեան	50
Տ. Սարգիս Էլմասան	97 50
Տ. Նիկողոս Վանեան	97 50

Համագումար Դրչ. ողջ 51058

ՅԱՌԱՋՐԻՄԱՍԷՐ ՄԵՌԻԹԻԻՆ ՄԸ

Լուր մը որ տակաւին հրապարակ ելած չէ, բայց և որ ինձ կը համի անգաղտնապահ նկուղներէ, կը հաւատատէ թէ Գահիրէի մէջ մարմին մը կազմուելու վրայ է նպատակ ունենալով չէզոք տարրը զօրայնել և մրցակցաբար մեր յեղափոխական կուսակցութիւններու՝ ձեռնամուխ ըլլալ տեղական ազգային գործերուն: Քսան հոգիէ բազկայած մնայուն մարմին մը Միութեան գործերը պիտի վարէ, իսկ պարզ անդամներուն թիւը դեռ որոշուած չէ:

Այս լուրը որքան տարօրինակ նոյնքան շահեկան է թէ՛ կուսակցականներուն և թէ՛ չէզոքներուն:

Կուսակցականի մը ազգային գործերով զբաղիլը որ և է անշուքիւն շունի իր յեղափոխական գործին հետ: Առաջնորդարանի պատերուն մէջ դարձած գործերը հիմնովին կը տարբերին յեղափոխական գործէն. և արդէն առաջնորդարանը, որպէս պաշտօնական մարմին, յեղափոխական կուսակցութիւն չձանձնար, յեղափոխութիւնն իսկ կ'անգիտանայ: Ըստ իս այն կու-

սակցականները որ յանուն յեղափոխութեան առաջ-
նորդարանին դուռը կը զարնեն՝ սխալ գործ մը ըրած
կ'ըլլան: Երեսփոխանական կամ քաղաքական ժողովին
այսինչ կամ այնինչ գործը քննադատելու համար
վատնուած ժամանակը եթէ դու ա յեղափոխական
գործին յատկացուի աւելի լաւ և աւելի օգտակար
գործ մը եղած կ'ըլլայ, որովհետէ աշխատիլ առաջ-
նորդարանի գործերը երոպական ձևի մը վերածել,
գեղձումները, գոզութիւնները բանալ, ազգին եթէ
ոչ էն խելագիրներէն գոնէ ոչ-ապուշներէ քաղկայած
ներկայացուցիչներ ունենալ՝ յեղափոխութեան գոր-
ծին չափ դժուարին է:

Ես կը խորհիմ թէ ձմարիս յեղափոխական մը
չչանագրգռուիլը ազդային տեղական գործերով յանուն
իր պատկանած կուսակցութեան:

Գալով չէզոք տարրը զօրայնելու խնդրոյն, այդ
ինձ համար հանելուկ մը կը մնայ: Ի՞նչ հասկնալու է
«չէզոք տարրը զօրայնել» ըսելով: Իմ գիտցածս, չէ-
զոք կը կոչուին այն Հայերը որ յեղափոխական ունէ
կուսակցութեան մը չեն պատկանիր: Արդէն «չէզոք»
բառը յեղափոխութեան հայեցակէտով միայն գոյու-
թիւն ունի:

Ըսել է գոյութիւն ունեցող մեր յեղափոխական
կուսակցութիւններուն դէմ մարմին մը կը կազմուի
«Յառաջդիմասէր» անուան տակ:

Բնան անմահներէն ոմանց հետ այս մասին խօ-
սած առնալ ինձ ըսին թէ Միութիւնը պիտի զբաղի
ընտրութեանց առթիւ գեղձումներ տեղի չունենալու
համար, յետոյ, երբ ազգային տեղական գործերուն
մէջ սխալ մը տեսնուի՝ զայդ մատնանիչ պիտի ընէ
պատկանեալ ժողովին և իր ազդեցութեամբ պիտի
չանայ այդ սխալը բանալ:

Յնդափոխական կուսակցութեանց զէմ մարմին
 լլայէ զատ, քննիչ, թէև ինքնակող, յանձնա-
 ր մըն ալ է ուրեմն որ ըստ տարագային՝ ընտ-
 րեանց պահուն ոստիկանութեան և ժողովներուն
 առնութեանց ստեղծ պապութեան գեր պիտի կա-
 ՚ն ՝ «Պապութիւն» ըսի որովհետև իր սազմային
 կէն իսկ ինքզինքը ուրիշներուն սխալը մատնա-
 նող կը հռչակէ, այսինքն երբ ազգային որ և է
 լ մը սխալ խորհի, ինք իր անսխալականութեամբ
 խալը պիտի ուղղէ :

Ինչ կշիռ կրնայ ունենալ այդ տեսակ ուրիշին
 ՝ բռնող և յնդափոխական կուսակցութեանց զէմ
 ըսած մարմին մը : Այժմէն կարելի չէ գիտնալ
 այդ եթէ իրօք Յառաջդիմասէրին նպատակը ու-
 ըելի լուրջ բան մը չէ, չարժեր որ այդ տեսակ
 ն մը գոյութիւն ունենայ :

Նշուչտ զեռ պիտի լսենք այս մասին և մութին
 աջած խորհուրդներ ի յայտ պիտի գան :

Րեմն սպասենք : **ՕՀԱՆՆԷՍ ՉԱՅԵԱՆ**

ԹԱՏՐՈՆ

յտնի է որ ժամանակէ մը ի վեր Ա. Պէնլեանի
 ութեան տակ, Վէսելօ (Չուարթ) թատերախում-
 վարիայէն Եգիպտոս եկած է և Գահիրէի մէջ
 ը ներկայացումներ տուած է որոնք մեծ յաջո-
 ն ունեցած են :

հութեամբ կը լսենք թէ Տ. Ա. Պէնլեան Ալեք-
 ոյ մէջ մէկ քանի ներկայացումներ պիտի տայ :

տառաջինը սեպտեմբեր 5 չորեքշաբթի գիշեր, Ալեմագրոս
Քատրոնին մէջ, Վատահ ենք թէ հոս եւ Վէսեյո խում-
բը պիտի ունենայ Գահիրէի մէջ ունեյած յաջողու-
թիւնը:

ՄԱՌՏ՝ ԻՐԱԿ

- Կը տեսնա՞ս սա կինը, կըսէր մէկը իր
քարեկամին տարիքոտ կին մը ցոյց տալով, շատ
բան պարտական եմ իրեն և մինչև մահս պար-
տական պիտի մնամ:

- Մա՞յոգ է:

- Չէ՛, տանտիրուհիս է:

Ալեքսանդրիոյ Հայոց առաջնորդարանը գը-
րեթէ պաշտօնապէս կը խնդրէ տեղւոյս հա-
րուստներէն որ մինչև եկեղեցւոյն փողոցին շի-
նութեան աւարտումը իրենց մահկանացուն չը
կնքեն: որովհետև ճամբաներու այժմեան վիճա-
կին մէջ անկարելի է պարտ ու պատշաճ կերպով
յուզարկաւորութեան արարողութիւնը կատարել:

Ազքատները կրնան ուզած ատեննին մեռ-
նիլ, առանց անպատեհութեան: Ապու Տարտարի
կողմը գտնուած նեղ դուռը իրենց արամադրու-
թեան տակ ըլլալով միշտ:

Հանգանակութիւնները կը յաջորդեն հան-

դանակութիւններու վեր. Հնչակեան կուսակցութեան հանդանակութիւնէն վերջ որ Ազատ Բեմի մէջ երեցաւ անցած շաբթու, ահաւասիկ հանդանակութեան ցանկ մը ի նպատակ վերջապէս ի զոր կը հրատարակենք պարտ ու պատշաճ շնորհակալութիւններով.

Վ. Ս. Ա. Բ.

Տիար Ե. Օսեան	8000
“ Գր. Նազարեթեան	2000
“ Վ. Թէքէեան	2000
“ Մ. Կիւճեան	1000
“ Ա. Ռչտունի	1000
“ Օ. Զայեան	800
“ Զեօր Զէնէրճեան	500
“ Երուանդ (գրաշար)	300
“ Օննիկ Պողոսեան	200
“ Քարմէլօ	150
“ Ե. Անդրէասեան	100
“ Ա. Արփիարեան	5
“ Ոմն	1,75
“ Այլ ոմն	4000
“ Մի այլ ոմն	1800
“ Եւս մի այլ ոմն	1300
“ Եւ եւս մի այլ ոմն	900
“ Եւ եւս մի այլ ոմն	700
“ Եւ եւս մի այլ ոմն	500
Ազն. Ռմնուհի	400

Իւրմտը զ՚՛ ողջ առողջ

25656,75

Այս գումարէն ինքնաբերաբար 2000 զրշ.
ողջ և առողջ նուէր զրկեցինք Կովկասի արկած-
եալին, Լէյէ Խրպանիի միջոցաւ, նմանապէս 1000
զրշ. ողջ և առողջ (հանդերձ բարեկամօք) Զէյ-
թունի Բարեսիրացին: Հանդանալութիւնը զեռ
կը շարունակուի:

Հատրնտիր քաղուածք Ազատ Բեմէն՝
«կը յանձնարարենք իրեն, զովացուցիչ տուշ
մը առնել Հէլվանի համբաւաւոր Չերմուկներուն
մէջ:»

Ն. Յ. ՕՀԱՆ
Ինչո՞ւ չէք յանձնարարեր իրեն սառուցեալ
տաքապուր մը իսկելու:

Ուրախութեամբ կը տեսնենք որ Ազատ Բեմ
հետզհետէ աւելի կիրթ ու վայելուչ լիցու մը կը
գործածէ իր յօդուածներուն մէջ եւ ջանք մը
կ'ընէ հեռանալու, իր կարողութեան տարածին
չափ, թուրումկաճիտական գրելակերպէն: Այսպէս,
այսօրուան 25 օգո՛ւտոսի թիւին մէջ, հաղիւ կը
գտնենք հետեւեալ որակականները:

«Մակարոյժ, վարձկան, իւրերբայ, լիտի,
վայրահաջ, փտախտացած, կեղծաւոր, բթացած,
այլասերած, ցնդած, գարշահոտած բերան, քուր-
ջի կտոր, սինըօր:»

գիրներ, հեռագրի ու պաշտօնական նամակներու պատ-
ճէններ, 80-100 ճառախօսութիւններու բնագիրներ,
հանրագրութիւններ, բողոքագիրներ, կն, կնն)

Նախագահ (Թուղթերու այդ լիոնանման գէղէն
դող ելած),- Մէգր Աշկապուկ, ստոնք բոլորը պիտի
կարգա՞ք հիմակ:

Մէգր Աշկապուկ.- Ո՛չ, տէր նախագահ, եթէ բո-
լոր ստոնք սեղանին վրայ կը դիզեմ պատճառը այն է
որ կը փոփազեմ պատկառելի ստեանիդ առջև, թանձ-
րացեալ ձևի մը տակ, ներկայացնել այն հսկայական
ծիղը զոր ըրած է, վեց տարիէ ի վեր, ամբաստան-
եալը, Սրէնքի և Իրաւունքի յաղթանակին համար,
Բոլոր այս թուղթերը, այս գրուածքները, յօդուած-
ներն ու քննադատականները զիտէ՞ք կամ կրնա՞ք երե-
ւակայել թէ ինչ աշխատութիւններով, զոհողութիւն-
ներով, աքնութիւններով ու քրտնաթաթաւ ջանքե-
րով առաջ եկած են և դուք այժմ կ'ուզէք այս ամէ-
նը առ ոչինչ գրել և ամբողջ այդ շարաչար աշխա-
տութեանց արդիւնքը եզոզ այս թղթակոյտը շխան-
քսան փարայի ծախել մօտակայ նպարավաճառին...
Ո՛չ, տէր նախագահ, այդպիսի անլուր անիրաւութիւն
մը կարելի չէ որ ի զործ դրուի արտասովոր ստեա-
նիդ կողմէ, այն անձնուէր հերոսներուն զէմ որոնք
Սահմանադրութեան սիրոյն համար...

Սահմանադրութիւն.- Տէր նախագահ, ներեցէ՛ք
որ զիտողութիւն մը ընեմ:

Նախագահ.- Ո՛չ, խօսք չունիք շարունակեցէ՛ք
Մէգր Աշկապուկ:

Մէգր Աշկապուկ.- Որոնք Սահմանադրութեան
սիրոյն համար չվարանկցան նոյնիսկ...

Սահմանադրութիւն.- Ինքզինքնին կրեսիոխան
ընտրել տալու...

Նախագահ.- Պարոն Սահմանադրութիւն, լսեցէք
ձեթէ ոչ ձեզ սրահէն զուրս վանակ պիտի տամ:

Սահմանադրութիւն.- Ո՛չ, կը բողբոմ փաստա-
քանին ըսածներուն դէմ, չեմ ընդունիր որ իմ անու-
նըս խաղաղիք ըլլայ մինչև հոգը:

(Նախագահը կը հրամայէ բարապաններուն որ
Սահմանադրութեան օձիքէն բռնեն ու զուրս նետեն
Սահմանադրութիւնը կ'ընդդիմանայ պ. Ժողովուրդը
խրարանցումէն օգուտ քաղելով՝ սօսմթէս մը կը նե-
տէ ամբաստանեալին գլխին, որ ետին դառնալով սը-
խայմամբ ապստի մը կը զարնէ Միաբանութեան ե-
րեսինս Հանրային կարծիքը ի զո՛ւր «Ամօթ է, տե-
զերնիդ նստեցէ՛ք» կը պոռայ. Տիկին Խնամակալու-
թիւնը որ մինչև այն ատեն հանդարտ նստած հան-
գիսատես կ'ըլլար, ոտքի կ'ելլէ և փէշերը ժողվելով
մաշիչ մը կը սկսի պարել: Նախագահը տեսնելով որ
անկարելի է այս պայմաններուն տակ դատաստանը
չարունակել, ատենը փակուած կը յայտարարէ և
զատին շարունակութիւնը յաջորդ կերակիին կը ձգէ):



Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԱՐԿԱՇԵՆՈՅ

Գումար «Թերթիկի» մէջ հրատարակուած նա-
խորդ ցուցակի շըշ. ողջ 49700
Նոր նուիրատուներ

Տ. Տ. Կ. և Պ. Օհանեան եղբարք	195
Բօռ-Սախաէն՝ Տ. Յակոբ Շէքիպ պէյ	97 50
Մանսուրայէն՝ Տ. Յարութիւն Ինայէթեան	200
Յէյուսէն՝ Տ. Միհրան Կիւլիանձեան	200
Տ. Օհաննէս Փափագեան	50
Տ. Անիկոսո Պաղձեան	50

քական կացութիւնը և եթէ տակաւին երկու ամիս ևս չարունակուէր, ապահովաբար Նզիպատտի հայ գաղութին մէջ քանի մը հարիւր քաղաքադէտներ ևս պիտի աւելնային:

Ինչո՞ւ սակայն կարելի չեղաւ շարունակել Թերթիկը:

Ասոր պատասխանը շատ պարզ է. — Որովհետեւ դրամադուլս չունէր և օրական սպառումը չէր բաւեր օրական ծախքերը դոցելու: Դալով բաժանորդներուն՝ կարելի չէր գանձում ընել իրենցմէ. քանզի հայ բաժանորդը ընդհանրապէս հայ Թերթի մը բաժնեդիրն Վճարելու համար քանի մը պայմաններ ունի. Նախ՝ պէտք է որ Թերթը կանոնաւորապէս ամբողջ տարին երեայ, յետոյ՝ խմբագրութիւնը պէտք է տու՛եկան բաժնեդիրին եռապատիկը արժէք ունեցող աւանդ մը ձգէ բաժանորդին քով եւ երրորդ պէտք է պատուաւոր դրամատէրներէ և վաճառականներէ Եօթը հոգի երաշխաւոր ցուցունէ թէ Թերթը պիտի շարունակէ յաջորդ շրջանին:

Եւ որովհետեւ Թերթիկ չէր կարող այդ պայմանները գործադրել, ստիպուեցաւ քաջուկը հրապարակէն, միտքը գնելով սակայն օր մը վերածնիլ իր աճիւններէն, նիւթական լաւագոյն երաշխաւորութեամբ մը:

“ԱԶԱՏ ԽՕՍՔ”, ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇՐՖԱԹ ՕՐԵՐԸ

Եզիպոսի համար բաժնեզինն է

40	ԹԻԻԸ	40	ՂՐԾ.	ՈՂԶ
20	”	20	”	”

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՐՐՈՊԱ	40	ԹԻԻ	10	ՖՐԱՆՔ
ՌՈՒՍԻ	”	”	4	ՐՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	”	”	2	ՏՈՒԱՐ

Բաժանորդագրուքիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԾ. ՈՂԶ

“ԱԶԱՏ ԽՕՍՔ”, ի համար բաժնեզինն կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPT)

Ծանուցումներ կրնդունուին մասնաւոր
պայտաններով:

Պատասխանատու - Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր Փոքր Կ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ Ալեքսանդրիա